ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ Է ՍՏՈՐԱԳՐՎԵԼ

22.03.2019 17:50

ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ Արարատի մարզպետարանի միջև այսօր՝ 2019թ. մարտի 22-ին, կնքվել է համագործակցության հուշագիր, որը ստորագրել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը և Արարատի մարզպետ Գարիկ Սարգսյանը:

Երկու կառույցների ղեկավարները ողջունել են մարզի համար այս կարևոր նախաձեռնությունը:

«Այս նախաձեռնությունը կնպաստի մարզի բնակիչների իրավագիտակցության բարձրացմանը, ինչպես նաև կնպաստի նրանց իրավական խնդիրների լուծմանը: Մենք լավ գիտենք, որ այսօր մեր քաղաքացիները կառավարման մարմինների ներկայացուցիչներին դիմում են հիմնականում իրավական խնդիրներով և այդ առումով այս համագործակցության շահառուն լինելու է քաղաքացին»,-հուշագրի ստորագրումից հետո ընդգծել է Արա Ջոհրաբյանը:

Խոսելով հուշագրի կարևորության մասին՝ Գարիկ Սարգսյանը նշել է. **«Մեր ունեցած ռեսուրսները միշտ չէ, որ բավարար են: Մարզպետարանի իրավաբանական բաժնի աշխատանքը գրեթե եռակի ավելացել է և չի հասցնում պատշաճ իրավախորհրդատվություն ապահովել մեր քաղաքացիներին»**:

Հուշագրի ստորագրմանը ներկա էին նաև Արարատի մարզի փաստաբաններ, այդ թվում՝ Փաստաբանների պալատի Արարատի մարզային նորընտիր համակարգող Արթուր Սարգսյանը:

Ըստ հուշագրի Արարատի մարզպետարանը վարչական շենքում անվճար տրամադրելու է տարածք ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի Արտաշատ քաղաքի նստավայրը տեղակայելու համար: Կողմերի համաձայնությամբ տարածքից օգտվելու իրավունք ունեն նաև մարզի տարածքում գործունեություն իրականացնող այն փաստաբանները, ովքեր չունեն փաստաբանական գործունեություն իրականացնելու տարածք: Իր հերթին ՀՀ փաստաբանների պալատը պատրաստակամություն է հայտնել տարածքում ապահովել հանրային պաշտպանների և փաստաբանների բնականոն գործունեության համար

անհրաժեշտ գույքով և տեխնիկայով։

Փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է նաև մարզի ավագ դպրոցներում սեմինարներ կազմակերպել աշակերտներին Մարդու իրավունքների մասին իրազեկելու և փաստաբանի մասնագիտության հիմունքներին ծանոթացնելու նպատակով։ Հանրային պաշտպանների, ինչպես նաև տարածքը զբաղեցնող փաստաբանների միջոցով յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր մարզի բնակիչների համար կազմակերպվելու է անվճար իրավաբանական խորհրդատվություն։

Կողմերը պայմանավորվել են անվճար իրավաբանական խորհրդատվության և տարածքների տրամադրման հարցերը քննարկել նաև մարզի մյուս քաղաքների (Մասիս, Արարատ, Վեդի) համար։

Արարատի մարզպետը նախատեսել է մարզպետարանի շենքի առաջին հարկից փաստաբանների պալատին հատկացնել առնվազն երեք աշխատասենյակ։

Հուշագրի ստորագրմանը մասնակցել են Ազգային ժողովի պատգամավորներ Ռուստամ Բաքոյանը, Սերգեյ Ատոմյանը Սեդրակ Թևանյանը։

Մարզում գործում է հանրային 4 պաշտպան։

ՀՀ ԴԱՏԱՎԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ
PRESS SERVICE OF CHAMBER


ՀՀ ԴԱՏԱՎԱՐԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })